

դազուն զնա ի տուն իւր եւ ԳՃ փայտ հարեալ յոտից, մինչ զի եւ եղնգունք մատանցն թափէին, եւ արգիլեաց ի գուբս մահապարտիցն, եւ յետոյ թողին ի բաց:

Ընդ աւուրս յայտոսիկ նաւ մի (ընկղմէր) ի ծով եւ Դ հրէայ սատակին ի գալն Ղուզգունճուխէ: Եւ դայմախափն գտեալ սուտ վկայս ոմանս եւ իրաւացի գտեալ զստութիւն նոցին՝ եգ ի նաւս պատերազմին, և մեծաւորս նոցա, որ էր իմամ, յետս կոյս թիւր ի յէշ նստոյց և շրջեցուցանէր սուպաշին զքաղաքաս:

Մեռաւ գուստր Իպրահիմ Սուլթանի Ֆաթմայ Սուլթան, որ ի սոյն ամի ետուն Իպրահիմ տէֆտէրտարի որ զնաց ի Մսըր: Սա մեծ գուստր է Իպրահիմի, որ ի կենդանութեան իւրում արար հարսանիս մեծ եւ ետ Ահմէտ վէզիրի Բ ամ, եւ յորժամ զնա կտրտեցին՝ ետուն Ֆազլիին որ նա արար կին. զնա եւ սպան Քեօփրուլու եւ նշան արարին Շահսուարին իբրու կին նմա. զնա եւ սպան անդ ի Մսըր, որ բերաւ գլուխ եւ զերես սուլթանին ոչ ետես: Եւ Իպրահիմ փաշային թողուլ ետուն զկինն որ ի ամաց հետէ մայր որդոց էր լեալ, եւ ետ խազնատարին իւրոյ. յետ ոչ բազում աւուրց զնալոյ փաշային անկաւ ի մահիճ և բազում ինչս ցրուեաց աղքատաց յաւուր որում զնէր ի մահճի և մեռաւ վաղապէս:

Մեռաւ և այգուցն Հոկտեմբեր Ժ.Ձ Սէֆէր խանճի ոմն (Բեբէ):

Մեռաւ և Քեօփրուլու յէտրէնէ ի ի ամսոյն (Հօփ.) Կիրակէի աւուր: Եւ հոգացեալ նախ ընդ արքայի եւ ասէ. Որպէս յաւուրս (իմ) հանգեար ամենայն թաքաւորութեամբ, նոյնպէս և յետ մեռանելոյ իմոյ լի-